ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2023 թվականի N 1663

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՀԱԼԱԲՅԱՆ (ՆԱԽԿԻՆ՝ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ) ՓՈՂՈՑ ԹԻՎ 8 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԻՄԱ ՄԱՆՈՒԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԵՎ ԲԱԳՐԱՏ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՔՈՍՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Բագրատ Վոլոդյայի Քոսյանի (ծնված՝ 18.10.1983թ.) և Սիմա Մանուկի Հովհաննիսյանի (ծնված՝ 28.09.1950թ.) լիազորված անձ Մելանյա Ջիվանի Քոսյանի դիմումը, 24.02.2023թ. տրված թիվ 1064 (նոտարական ակտի կոդ: 843-20230224-90-6707755) լիազորագիրը, 22.03.2023թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1564 (նոտարական ակտի կոդ: 843-20230314-84-6751018) վկայագիրը, 20.03.2023թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1566 (նոտարական ակտի կոդ: 843-20230317-84-6762118) վկայագիրը, 22.03.2023թ. սեփականության իրավունքի թիվ 1562 (նոտարական ակտի կոդ: 843-20230318-105-6764761) վկայագիրը, 18.09.1987թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունը, 27.06.2023թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-190/23 Ի եզրակացությունը, «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, մասնագիտական եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի 28.04.2023թ. հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023VTLPRL), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Հալաբյան (նախկին Կուրղինյան) փողոց թիվ 8 հասցեում կառուցած բնակելի տունը, շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ օրինական 239.4քմ հողամասին կից 90.8քմ մակերեսով հողամասերը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1952-1990թթ.-ին, դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 330.2քմ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Բագրատ Վոլոդյայի Քոսյանի(1/4) և Սիմա Մանուկի Հովհաննիսյանի (3/4) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Հալաբյան (նախկին Կուրղինյան) փողոց թիվ 8 հասցեում հասցեում գտնվող անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 239.4քմ հողամասին կից 90.8քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Բագրատ Վոլոդյայի Քոսյանի(1/4) և Սիմա Մանուկի Հովհաննիսյանի (3/4) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Հալաբյան (նախկին Կուրղինյան) փողոց թիվ 8 հասցեում գտնվող 330.2քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Վանաձոր քաղաքի Հալաբյան (նախկին Կուրղինյան) փողոց թիվ 8 հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Կ. Հալաբյան փողոց, թիվ 8/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. նոյեմբերի 27
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2023 թվականի N 1664

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Պ. ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 47 ՇԵՆՔԻ ԲԱԿՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Արարատի Ամիրխանյանի 09.03.2023թ. թիվ 3656 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /82424/, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 05.09.2023թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-70/23 ա եզրակացությունը, 26.04. 2023թ Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 10.03.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023WAABB5), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Պ. Սևակի փողոց, թիվ 47 շենքի բակում ինքնակամ կառուցված,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 20.46քմ արտաքին /ներքին մակերեսը՝ 18.06քմ/ մակերեսով ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 17.4քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի

նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Պ. Սևակի փողոց, թիվ 47 շենքի բակում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք. Պ. Սևակի փողոց, 47/32 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. նոյեմբերի 27
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2023 թվականի N 1665

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ 2-ՐԴ ԱՎԱՆ, ԹԻՎ 36 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՎԵՏԼԱՆԱ ՇԱՀՎԱԼԱԴԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սվետլանա Շահվալադի Մարտիրոսյանի (ծնված՝ 09.01.1959թ.) դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 04.07.2023թ. տրված թիվ 3791 (նոտարական ակտի կոդ: 594-20230704-7075363) հայտարարությունը, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, 05.09.2023թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-292/23 Ի եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի 25.07.2023թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023NZDNDN), «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավան, թիվ 36 (պայմանական) հասցեում կառուցված բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 164.02քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1990-1996թթ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 164.02քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1990թ.-ից:

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Սվետլանա Շահվալադի Մարտիրոսյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավան, թիվ 36 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական

բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 164.02քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ :

2. Փոխել Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավան, թիվ 36 (պայմանական) հասցեում գտնվող 0.016402հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Բուլղարական ավան 2-րդ թաղամաս, թիվ 36 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. նոյեմբերի 27
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2023 թվականի N 1666

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ 84/137 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ՁԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՈՎՆԱՆ ԱՇԽԱՐՀԱԲԵԿԻ ՄԱՅԻԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հովնան Աշխարհաբեկի Մայիլյանի 24.10.2022թ. թիվ 13678 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10102023-06-0044 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով, Վանաձոր համայնքի ավագանու 26.04.2023թ. թիվ 33 որոշման՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց 84/137 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 66.37քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 58.12քմ) ավտոտնակը 212790 (երկու հարյուր տասներկու հազար յոթ հարյուր իննսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 30.27քմ մակերեսով հողամասը 489670 (չորս հարյուր ութսունինը հազար վեց հարյուր յոթանասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Հովնան Աշխարհաբեկի Մայիլյանին:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Հովնան Աշխարհաբեկի Մայիլյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. նոյեմբերի 27
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2023 թվականի N 1667

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ 2/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՈՀԱՐ ԵՂԻՇԵԻ ԴԵՐՁՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գոհար Եղիշեի Դերձյանի 11.07.2022թ. թիվ 7117 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24102023-06-0041 վկայականը, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Գ. Նժդեհի փողոց 2/3 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 20.4քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 18.6քմ) ավտոտնակը 76930 (յոթանասունվեց հազար ինը հարյուր երեսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 20.4քմ մակերեսով հողամասը 507730 (հինգ հարյուր յոթ հազար յոթ հարյուր երեսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Գոհար Եղիշեի Դերձյանին:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Գոհար Եղիշեի Դերձյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. նոյեմբերի 27
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2023 թվականի N 1668

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ 2-ՐԴ ԱՎԱՆ, ԹԻՎ 55 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆԱՀԻՏ ՊԱՐԳԵՎԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Պարգևի Գրիգորյանի (ծնված՝ 07.06.1965թ.) դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 28.06.2023թ. տրված թիվ 3583 (նոտարական ակտի կոդ: 594-20230627-66-7053366) հայտարարությունը, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, 07.09.2023թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-296/23 Ի եզրակացությունը, 21.07.2023թ.ՀՀ կադաստրի կոմիտեի տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023ZADAFQ), «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավան, թիվ 55 (պայմանական) հասցեում կառուցված բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 52.88քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1990-1999թթ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 52.88քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1990թ.-ից:

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Անահիտ Պարգևի Գրիգորյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավան, թիվ 34 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական

բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 52.88քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ :

2. Փոխել Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավան, թիվ 55 (պայմանական) հասցեում գտնվող 0.005288հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Բուլղարական ավան 2-րդ թաղամաս, թիվ 55 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. նոյեմբերի 27
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2023 թվականի N 1669

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 21/2-2 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Ռուբենի Մարգարյանի դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 22.08.2022թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-114/22 Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 25.01.2022թ. ՀՀ կադաստրի կոմիտե տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022KQKNBV), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոցի թիվ 21/2-2 հասցեին կից ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 38,0քմ արտաքին մակերեսով կիսակառույցի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 38.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված հասարակական գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված

կիսակառույցի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված կիսակառույցի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին կիսակառույցը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

6. Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոցի թիվ 21/2-2 հասցեին կից գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, ք. Վանաձոր, Մոսկովյան փողոց, 21/3 կիսակառույց:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. նոյեմբերի 27
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2023 թվականի N 1670

<,ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >>ԵՎ<<ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 35 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և տուրիզմի հարցերի բաժնի պետի պաշտոնակատար Քրիստինե Մադոյանի զեկուցագիրը և ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարաի 2023թ.-ի հոկտեմբերի 31-ի N 138- Ն հրամանով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին >> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, ***որոշում եմ***

1.Վերանվանել «Վանաձոր համայնքի թիվ 5 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը «Վանաձոր համայնքի թիվ 5 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն և «Վանաձոր համայնքի թիվ 35 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել «Վանաձոր համայնքի թիվ 35 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2.Հաստատել «Վանաձոր համայնքի թիվ 5 մսուր-մանկապարտեզ» և «Վանաձոր համայնքի թիվ 35 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. նոյեմբերի 27
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2023 թվականի N 1671

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՓՈՂՈՑ 55 ՇԵՆՔ, 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԼԻԼԻԹ ՌՈՒԲԻԿԻ ԱՂԱՄԻՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լիլիթ Ռուբիկի Աղամիրյանի դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29012020-06-0002 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Փոխել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Տարոն-4 Սեբաստիայի փողոց 55 շենք, 2 հասցեում գտնվող բնակարանի գործառնական նշանակությունը՝ բնակելիից՝ որպես հասարակական գործառնական նշանակությամբ շինություն՝ գրասենյակ:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքը հանել բնակարանային ֆոնդից:

3. Բնակարանի գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

4. Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Տարոն-4 Սեբաստիայի փողոց 55 շենք, 2 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Սեբաստիայի փողոց, 55 շենք, 2 գրասենյակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. նոյեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2023 թվականի N 1672

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ ԱԼԵՔՍ ՍԱՍՈՒՆ ԵԳԱՆՅԱՆԻՆ ԵՎ ՎԱՀԱՆ ՍԱՍՈՒՆ ԵԳԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ԳՐԱՎ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ամուսիններ՝ Սասուն Սամվելի Եգանյանի և Սյուզաննա Վազգենի Եգանյանի դիմումն իրենց անչափահաս երեխաներին պատկանող գույքը գրավ դնելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից տրված 2023 թվականի նոյեմբերի 03-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 18, կետ 3), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածով. ***որոշում եմ՝***

Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տարոն 3, ՔՇՀ 11 փողոցի թիվ 25 շենքի թիվ 9 բնակարանի բնակիչներ, ամուսիններ՝ Սասուն Սամվելի Եգանյանին (ծնված՝ 13.06.1980թ., նույնականացման քարտ՝ 009225723, տրված՝ 11.01.2018թ., 018-ի կողմից) և Սյուզաննա Վազգենի Եգանյանին (ծնված՝ 05.09.1986թ., նույնականացման քարտ՝ 009288051, տրված՝ 27.12.2017թ., 018-ի կողմից) թույլատրել գրավ դնել իրենց անչափահաս երեխաներին՝ Ալեքս Սասուն Եգանյանին (ծնված՝ 24.05.2012թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 194886, տրված՝ 30.05.2012թ., ՔԿԱԳ Վանաձորի տ/բ-ի կողմից) և Վահան Սասուն Եգանյանին (ծնված՝ 19.04.2006թ., ծննդյան վկայական՝ ԱԱ 092151, տրված՝ 04.05.2006թ., ՔԿԱԳ Վանաձորի տ/բ-ի կողմից) պատկանող Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տարոն 3 ՔՇՀ 11 թաղամաս, թիվ 25 շենքի թիվ 9 բնակարանի բաժնեմասերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. նոյեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2023 թվականի N 1673

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 14/31Գ ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գոհար Միշայի Պոստալակյանի 01.11.2023 թվականի թիվ 18968 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1131504 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /125323/, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 14/31գ հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տիգրան Մեծի պողոտա, 14/31 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. նոյեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2023 թվականի N 1674

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԴԱՐՊԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Շուրիկ Շամիրի Համբարյանի լիազորված անձ Կարեն Վանիկի Բալայանի 12.10.2023 թվականի թիվ 17592 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1744300 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /124978/, 26.09.2023 թվականի թիվ 5223 լիազորագիրը/նոտարական ակտի կոդ: 594-20230926-79-7325750/ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք գյուղ Դարպասում գտնվող տնամերձին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Սարի թաղի 3-րդ փողոց, 3-րդ փակուղի, 3/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. նոյեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2023 թվականի N 1675

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՓՈՂՈՑ 8/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՇՈՏ ԼԵՎՈՆԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԽԱՆՈՒԹԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Լևոնի Գաբրիելյան 04.09.2023 թվականի թիվ 02/15059 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06092023-06-0021 վկայականը, Գասպար Վեքիլյան ԱՁ-ի կողմից տրված շինությունների հատակագիծը, ղեկավարվելով՝«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 և ՀՀ կառավարության 2021թ. ապրիլի 15-ի թիվ 600-Ն որոշումներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Վերածննդի փողոց թիվ 8/3 հասցեի 42.61քմ մակերեսով խանութի երկրորդ հարկի օգտագործման նպատակը փոխել բնակելի տան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. նոյեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2023 թվականի N 1676

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԻԶԱՄԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8Բ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սեյրան Ռաֆայելի Նալբանդյանի 06.11.2023 թվականի թիվ 19354 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2228735 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /125005/, 20.11.2023թվականի անշարժ գույքի առուվաճառքի թիվ 6287 պայմանագիրը/ նոտարական ակտի կոդ: 843-20231020-2-7401844/, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Նիզամի փողոց թիվ 8բ հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Նիզամու փողոց, 8/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. նոյեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2023 թվականի N 1677

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՓՈՂՈՑ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նարա Ռուբիկի Սոֆյանի 07.11.2023 թվականի թիվ 19464 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09022023-06-0002 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /125369/, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Հ. Մարգարյան փողոց 14 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Հ. Մարգարյան փողոց, 14/2 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. նոյեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2023 թվականի N 1678

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑ 16Ա/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայկ Ժիրայրի Սուղյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20072023-06-0081 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Ազատամարտիկների փողոց 16ա/1 հասցեում գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Վարդանանց փողոց, 112/3 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. նոյեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2023 թվականի N 1679

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 7Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԴՊՐՈՑԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Պ. Տիչինայի անվան թիվ 20 միջն. դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Նաիրա Լյովայի Բարիկյանի 18.10.2023 թվականի թիվ 18010 դիմումը, 16.11.2023թ. ՀՀ Լոռու մարզպետի թիվ 20165 թիվ 01/106.3.6/08428-2023 գրությունը անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 989131 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /123732/, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փող թիվ 7ա հասցեում գտնվող դպրոցին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ա. Մյասնիկյան փողոց, 7/1 դպրոց:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. նոյեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2023 թվականի N 1680

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1401 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արսեն Ստյոպայի Սաքանյանի լիազորված անձ Էդգար Գուրգենի Հակոբյանի դիմումը, 02.10.2023թ. տրված թիվ 8107 (նոտարական ակտի կոդ 763-20231002-90-7343884) լիազորագիրը, Վանաձոր համայնքի ղեկավարի 06 հոկտեմբերի 2023 թվականի թիվ 1401 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի 25.10.2023թ. տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-25102023-06-0095 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 06 հոկտեմբերի 2023 թվականի «Վանաձոր քաղաքի Մայմեխի խճուղի թիվ 15-1 հասցեի հարավային մասում գտնվող բնակելի տան ու հողամասի նկատմամբ Արսեն Ստյոպայի Անդրեասյանի սեփականության իրավունքը ճանաչելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1401 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Որոշման նախաբանում «ԱՐՍԵՆ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» բառերը փոխարինել «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. նոյեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2023 թվականի N 1681

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1390 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 06 հոկտեմբերի 2023 թվականի թիվ 1390 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 06 հոկտեմբերի 2023 թվականի «Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 75/44գ հասցեում գտնվող, Լուսինե, Ռիմիկ և Գայանե Ղազարյաններին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի զբաղցրած հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1390 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Որոշման 2-րդ կետում «Ռազմիկ» բառը փոխարինել «Ռիմիկ» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. նոյեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2023 թվականի N 1682

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ 10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԴՊՐՈՑԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան թիվ 1 հիմնական դպրոցի տնօրեն Աննա Նորայրի Զուլոյանի 20.10.2023 թվականի թիվ 18041 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04092023-06-0050 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /126809/, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոց 10 հասցեում գտնվող դպրոցին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ա. Մյասնիկյան փողոց, 10/1 դպրոց:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. նոյեմբերի 30
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2023 թվականի N 1683

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 66Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարդան Ժորժիկի Ավետյանի 31.10.2023 թվականի թիվ 18947 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2224239 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը /123960/, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոց թիվ 66ա հասցեում գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Մոսկովյան փողոց, 66/1 սպասարկման համալիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. նոյեմբերի 30
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2023 թվականի N 1684

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 06-084-0029-0017) ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԳԵՂԵՑԻԿ ՀԱԿՈԲԻ ՍԵՐԴԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գեղեցիկ Հակոբի Սերդարյանի (ծնված՝ 23.02.1955թ.) 06.11.2023թ. թիվ 02/19371 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 0275461 վկայականը, 13.11.2023թ տրված «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-399/23 Ի եզրակացությունը, ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, բնութագիրը, եզրակացությունը, 06.11.2023թ. ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023W3TVYG), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման /126110/ քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով, 18-րդ կետի ա) ենթակետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Վանաձոր համայնքի Լոռու մարզ գյուղ Շահումյան (ծածկագիր՝ 06-084-0029-0017) հասցեում գտնվող, Գեղեցիկ Հակոբի Սերդարյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած 0.095հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
2. Ճանաչել օրինական Վանաձոր համայնքի Լոռու մարզ գյուղ Շահումյան (ծածկագիր՝ 06-084-0029-0017) հասցեում գտնվող, Գեղեցիկ Հակոբի Սերդարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված

105.8քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին՝ 76.5քմ) բնակելի նշանակության շինությունները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
3. Գեղեցիկ Հակոբի Սերդարյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 105.8քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին՝ 76.5քմ) բնակելի նշանակության շինությունների համար՝ 150450 (հարյուր հիսուն հազար չորս հարյուր հիսուն) դրամ: Գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 11-րդ փողոց, 11 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2023թ. նոյեմբերի 30
ք.Վանաձոր